

**ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

(ըստ խոսքի մասերի)

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ս. Պ.

Նույնաբաղադրիչ փոխատեղությունը, որոնց թիվը հայերենում մեր հաշվումներով մոտ 4000 է, կազմում են մի հետաքրքրական ու յուրահատուկ բառաշերտ: Բառերն այստեղ բաղկացած են միևնույն բաղադրիչներից՝ հետևառաջությամբ: Նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված բաղադրիչների դրափոխությունը հիմնականում կարող է լինել նյութական իմաստ ունեցող խոսքի մասերում: Ոչ նյութական խոսքի մասերի մեջ գրեթե չեն հանդիպում փոխատեղական կապեր և ձայնարկություններ: Կան մի քանի շաղկապներ ու վերաբերական (եղանակավորող) բառեր: Արդ, քննենք նյութական խոսքի մասերը:

ԳՈՅԱԿԱՆ: Գոյականական նույնաբաղադրիչ փոխատեղությունը քանակով ամենից շատն են՝ մեր հաշվումներով, երկու հազարից ոչ պակաս: Նախ, ասենք, որ նույնաբաղադրիչ փոխատեղությունների մեջ ներառված են ոչ միայն հասարակ, այլև հատուկ անունները՝ անձնանուններ, ազգանուններ, տեղանուններ: Անձնանուններից քչերն են բուն հայաբառ, մեծ մասամբ օտարամուտ են: XI-XX դդ., ենթարկված լինելով թյուրքական ցեղերի, պարսիկների, XV դարից, մասնավորապես, թուրքերի անվերջ արշավանքներին, մասնատվելով նրանց միջև, Հայաստանն ընկավ այլազգի մշակույթների, հատկապես լեզվական ուժեղ ազդեցության տակ: Բնականաբար, նույնը տեղի ունեցավ անունների առումով: Ձգտում կար մարդկանց կոչել տիրապետողների մեջ տարածված պատվանուններով, բարձր դասի ներկայացուցիչների կոչումներով: Ճիշտ է՝ մեր օրերում այդ կարգի անուններն այլևս գրեթե չեն հանդիպում, սակայն մասամբ շարունակում են մնալ ազգանուններում և, լինելով ոչ վաղ անցյալում, արտացոլվել են մատենագրության մեջ՝ հենց հայերի առնչությամբ: Հիշատակենք փոխատեղական առումով հետաքրքրական հետևյալ բաղադրիչներով կազմված մի քանի անուններ:

Շահ. Շահագիգ-Ազիզշահ, Շահալամ-Ալա(ե)մշահ, Շահամիր-Ամիրշահ, Շահխաթուն-Խաթունշահ, Շահմելիք-Մելիքշահ, Շահմիրան-Միրանշահ, Շահմուրադ-Մուրադշահ, Շահնազար-Նազարշահ, Շահպարոն-Պարոնշահ, Շահսուլթան-Սուլթանշահ:

Սուլթան. Սուլթանբեգ(կ)(ի) - Բեգ(կ)(ի)սուլթան, Սուլթանխան-Խանսուլթան, Սուլթանշահ-Շահսուլթան, Սուլթանջան-Ջանսուլթան:

Խան. Խանադա-Ադախան, Խանամիր-Ամիրխան, Խանբեկ(ի)-Բեկ(ի)խան, Խանգյուլ-Գյուլխան, Խանսուլթան-Սուլթանխան, Խանմուրադ-Մուրադխան, Խանփերի-Փերիխան:

Խաթուն (խազար., թաթար., թրք.՝ ազնվական տիկին). Խաթունամա-Մամ(ա)խաթուն, Խաթունմելիք-Մելիքխաթուն, Խաթուննազ-Նազխաթուն, Խաթունշահ-Շահխաթուն, Խաթունջան-Ջանխաթուն, Խաթունփաշա-Փաշախաթուն:

Բեզ(կ). Բեզ(ի)սուլթան-Սուլթանբեզ, Բեզիջան-Ջանիբեզ, Բեզ(ի)խան-Խան(ի)բեզ, Բեզնազար-Նազարբեզ:

Աղա. Աղազ(յ)ուլ-Գ(յ)ուլաղա, Աղախան-Խանաղա, Աղախանում-Խանումաղա, Աղամիր-Ամիրաղա, Աղաջան-Ջանաղա:

Ամիրա (արաբ.՝ կուսակալ, կառավարիչ). Ամիրգ(յ)ուլ-Գ(յ)ուլամիր, Ամիրխան – Խանամիր, Ամիրշահ-Շահամիր, Ամիրջան-Ջանամիր:

Մելիք (արաբ.՝ թագավոր: Իգական անուններում՝ «մալաք»՝ հրեշտակ, բառի սխալ ըմբռնումից ու ձևափոխությունից). Մելիքխաթուն-Խաթունմելիք, Մելիքշահ-Շահմելիք, Մելիքջան-Ջանմելիք:

Անձնանուններում աչքի է զարնում պրսկ.՝ *գուլ* (ծաղիկ), թրք.՝ *ցուլ* (վարդ) բաղադրիչը, Գ(յ)ուլաղա-Աղազ(յ)ուլ, Գ(յ)ուլամիր-Ամիրգ(յ)ուլ, Բախչազ(յ)ուլ-Գ(յ)ուլբախչա, Գ(յ)ուլխան-Խանգ(յ)ուլ, Գ(յ)ուլնար(ա)-Նարգ(յ)ուլ /նոան ծաղիկ/, Գ(յ)ուլփերի-Փերիգ(յ)ուլ: Անձնանունների մի մասը, ի նշան փառաբանության և սիրո, կազմվել է պարսկերեն *ջան* (հոգյակ) բաղադրիչով. Ջանաղա-Աղաջան, Ջանամիր-Ամիրջան, Ջանիբեզ(կ)-Բեզ(կ)իջան, Ջանխաթուն-Խաթունջան, Ջանմելիք-Մելիքջան, Ջանսուլթան-Սուլթանջան, Ջանփաշա-Փաշաջան: Ի դեպ, *ջան*-ը անցել է նաև ոչ պարսկական ծագում ունեցող անունների՝ ինչպես. Հակոբջան, Օհանջան:

Հիշատակված բաղադրիչներից բացի, մի քանի անձնանուններ կազմողներից են. խանում, փաշա: Իհարկե, նշված բաղադրիչներով անունները այսքանով չեն սահմանափակվում, կան ուրիշներն էլ, որոնց մեջ, սակայն, փոխատեղությունների չենք հանդիպել: Վերը բերված որոշ անձնանուններից կազմված են և այժմ էլ լայնորեն գործածվում են հայոց փոխատեղական ազգանուններ: Վերապահության պատճառներից մեկն այն է, որ անունների մի մասն էլ իզական է: Ազգանվանական առավել բանուկ բաղադրիչներն են՝ *ամիրա*, *բեզ*, *խան*, ինչպես. Ամիրաղյան-Աղամիրյան, Ամիրգուլյան-Գուլամիրյան, Ամիրխանյան-Խանամիրյան, Ամիրշահյան-Շահամիրյան, Բեզ(կ)իջանյան-Ջանիբեզ(կ)յան, Բեզխանյան-Խանբեզյան, Բեզնազարյան-Նազարբեզյան, Խանցուլյան-Գյուլխանյան, Բաբախանյան-Խանբաբյան, Խանփերյան-Փերիխանյան:

Հայերեն բաղադրիչներով երկարմատ անձնանունները շատ չեն: Եղածներից էլ ոչ բոլորում է առկա հետևառաջության լեզվական իրողությունը: Կարող ենք ցույց տալ հետևյալ փոխատեղությունները (գույգի մեկ անդամը կարող է հատուկ անուն չլինել). Արևշատ-Շատարև, Ջարվարդ-Վարդազար, Ոսկեծամ-Ծամոսկի, Պարոնվարդ-Վարդպարոն (հմմտ. Աղացուլ-Գյուլաղա), Պարոնտեր-Տերպարոն, Սիրվարդ-Վարդասեր, Սիրուխտ (իզական)-ուխտասեր, Ջորայր-այրազոր, Մայրտիկին-Տիկինմայր: Վարդ, արև գոյականներով ունենք չորս ազգանուն. Պարոնվարդյան-Վարդպարոնյան, Արևշատյան-Շատարևյան:

Քանակով շատ ավելին են նույնաբաղադրիչ փոխատեղությային տեղանունները, որոնցում լայնորեն արտացոլված են Հայաստանի բնությունը, աշխարհագրական հատկանիշները, պատմությունը, մարդն՝ իր դիտողականությամբ ու կենսակերպով ընդհանրապես: Հենց այս հանգամանքների հետ էլ կապված են առավել հաճախ հանդիպող դրափոխվող բաղադրիչները: Ուրիշ էլ ինչպե՞ս պիտի կազմեին տեղանունները քարա-

շատ, աշխարհագրորեն ամբողջովին կտրտված Հայաստանում, եթե ոչ առաջին հերթին՝ *քար, սար ու ձոր* արմատներով: Պատմական իրադարձությունների բերումով շարունակ ամրություններ էին կառուցում, և բնակավայրեր հիմնադրում: Եվ այս ամենը բնորոշում էին վայրին, ձևին համեմատ կամ աղերսելով ժամանակի անձանց, նպատակների հետ՝ անվանումներն էլ կազմելով *բերդ, ավան, գյուղ, շեն* արմատներով: Այս առումով անդրադառնանք որոշ տեղանունների: *Քար* բաղադրիչը փոխատեղվում է մոտ 50 գոյականներում, որոնցից են. Քարադաշտ (գյուղեր՝ Վանի նահանգում, Արարատյան դաշտում)<sup>1</sup> - Դաշտաքար (հրվանդան՝ Աղթամար կղզու դիմաց), Թաղաքար (լեռնանցք՝ Զանգեզուրի լեռնահամակարգում) - Քարաթաղ (վայր Վայոց ձորի մարզում), Քարակոթ (գյուղ՝ Նոր Բայազետ գավառում) - Կոթաքար (գյուղ՝ Սյունիքում), Քարբույս (գյուղ՝ Էրզրումի նահանգում) - Բուսաքար (գյուղ՝ Սյունիքում), Քարծայր (լեռ՝ Տավրոսի լեռնաշղթայում) - Ծայրաքար (վանք՝ Շիրակի գավառում), Քարկատար (լեռնաշղթա՝ Վայոց ձորի մարզում) - Կատարաքար (լեռնագագաթ՝ Շիրակի բարձրավանդակում):

Ձոր. հանդիպում է ավելի քան 20 նույնաբաղադրիչ փոխատեղություններում՝ Ձորագետ (գետ՝ Լոռու մարզում) - Գետաձոր (ձոր՝ պատմական Լոռիում), Ձորագյուղ (գյուղեր՝ Գուգարքում, Արագածոտնում և այլուր) - Գյուղաձոր (գյուղ՝ Էրզրումի նահանգում), Ձորաղբյուր (գյուղ՝ Կոտայքում) - Աղբերաձոր (գյուղ և ձոր՝ Մոթք գավառում), Ձորաթաղ (թաղամաս՝ Մուշ քաղաքում) - Թաղուձոր (գյուղ՝ Մասունում), Ձորավանք (վանք՝ Գողթն, Տոսպ գավառներում) - Վանքաձոր (գյուղ և ձոր՝ Լոռիում):

Բերդ. հանդիպում է 12 նույնաբաղադրիչ փոխատեղությանին տեղանուններում: Բերդագյուղ (Տավուշի մարզ, այժմ՝ Բերդավան) - Գյուղբերդ (ամրոց՝ Արդահան գավառում), Բերդաձոր (գյուղեր՝ պատմական և այժմյան Հայաստանում) - Ձորաբերդ (հնավայր՝ Երևան քաղաքում), Բերդաջուր (Դեբեդ գետի մի վտակը) - Զրաբերդ (գյուղեր՝ Թարթառ գետի ափերին), Բերդավանք (բերդ, գյուղ՝ պատմական Հայաստանում) - Վանքբերդ (գյուղ և գետակ՝ Կարսի մարզում), Բերդաքար (բերդեր, լեռնագագաթ՝ ներկայիս Հայաստանում, Սյունիքի մարզ) - Քարաբերդ (գյուղեր և լեռնագագաթ՝ ներկայիս Հայաստանում, Տավուշի մարզ):

Շեն. հանդիպում է 12 փոխատեղական տեղանունների մեջ: Շենա-ձոր (գյուղ՝ Բիթլիսի նահանգում) - Ձորաշեն (գյուղ և գետ՝ Սյունիքում), Շենավան (Փամբակ գետի մի վտակը, գյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում) - Ավանաշեն (գյուղ՝ Արցախում), Շենհովիտ (Շենգավիթի նախկին անվանումը) - Հովտաշեն (գյուղեր՝ Շիրակի, Արարատի մարզերում):

Այսպիսով, ընդհանուր առմամբ, հաշվել ենք նույնաբաղադրիչ փոխատեղությունների մեջ ներառված շուրջ 300 հատուկ անուն, որոնցից 90-ը անձնանունն է, 24-ը՝ ազգանուն, և մնացածը՝ տեղանուն:

Հասարակ գոյականների կազմության մեջ աչքի է զարնում *ուրթյուն* վերջածանցը, որով հաշվել ենք մոտ 400 նույնաբաղադրիչ փոխատե-

<sup>1</sup> Կարճառտության համար փակագծերում բերվում են տվյալ բաղադրիչներով կազմված ոչ բոլոր տեղանունները:

դույթ: Երկրորդ տեղում է *ոււ* վերջածանցը՝ մոտ 100 փոխատեղույթ: Մյուս գոյականակերտ ածանցները՝ *ակ, ան, անք, ալոր, արան, աց, էստ, էցի, իլ, իկ, ին, իչ, յակ, յան, ոց, ված, ցի, ուկ, ույց, ույք, ուն, ունդ, ուրդ, ք*, միասին վերցրած, ավելի քիչ փոխատեղականների կազմության մեջ են մտնում, քան միայն *ույթուն* վերջածանցը: Այսինքն՝ սրանք ներկա դեպքում բանուկ չեն. մի քանիսը հանդիպում են երկու, ուրիշները՝ չորս, երրորդները՝ վեց կամ փոքր-ինչ ավելի բառերում: Համեմատաբար գործուն է *յան* ազգանվանակերտը: Սա նշանակում է, որ փոխատեղական գոյականային բառաբարդությունները մեծ մասամբ բաղկացած են երկու արմատից՝ առանց ածանցի: *Ույթուն, ոււ, յան, էցի, ցի* ածանցներն անշարժ են, արմատների դրափոխությունից անկախ միշտ բառավերջում են. քննադատություն-դատաքննություն, դրափոխություն-փոխադրություն, երգասիրություն-սիրերգություն, զարդանկարում-նկարազարդում, կերպափոխում-փոխակերպում, Ամիրխանյան-Խանամիրյան, սևքարեցի-քարսեցի: Մյուս ածանցներն արմատների հետ կարող են տեղափոխվել՝ գալով առաջ կամ գնալով հետ. երգչախումբ-խմբերգիչ, գրանշան-նշանագիր, հանքածուխ-ածխահանք, գրապահեստ-պահեստագիր:

Հետաքրքրական է, որ բառային բաղադրիչների փոխատեղումը կարող է հանգեցնել ոչ միայն բառիմաստային, այլև խոսքամասային փոփոխությունների: Անդրադառնանք այս լեզվական իրողությանը՝ գոյականների առնչությամբ: Նախ, ասենք, որ մեծ թվով բառազույգերում երկու անդամներն էլ գոյականներ են, այսինքն՝ փոխատեղությունը կարող է նաև խոսքամասային փոփոխություն չբերել: Ըստ որում, ճիշտ է՝ քիչ դեպքերում, անդամներից մեկը կարող է լինել հատուկ անուն, իսկ մյուսը՝ հասարակ, ինչպես. Արծվաքար (գյուղ՝ Գավառ քաղաքի մոտ և հրվանդան՝ Սևանի արևմտյան ափին) - քարարծիվ, Երիցգյուղ (գյուղ՝ Էրզրումի նահանգում) - գյուղերեց, Խաղմանուկ (գյուղ՝ Մուշի մոտակայքում) - մանկախաղ, Ձկնագետ (Սևանը թափվող գետ) - գետածուկ, Ուղեձոր(ձոր՝ Մյունիքում և գյուղ՝ Վայոց ձորում) - ձորուղի, Քարահերձ (գյուղ և հնավայր՝ Արցախում) - հերձաքար (թերթաքարի մի տեսակը): Անհամեմատ շատ են այն բառազույգերը, որոնց երկու անդամն էլ հասարակ գոյական են. խաղաթուղթ-թղթախաղ, գիտափորձ-փորձագետ, ճոճացանց-ցանցաճոճ: Ձուգադրական հարադիրներում և բաղիյուսական բարդություններում բաղադրիչների հետևառաջությունից հետո ևս խոսքի մասը նույնն է մնում: Դեռ-զուռնա և զուռնա-դեռ, թել-ասեղ և ասեղ-թել, առևտուր-տուրևառ, բան ու բառ-բառ ու բան: Նկատենք, որ բառազույգերը նույնիմաստ են: Հեռիմաստ անդամներով բառազույգերի մի մասում, ինչպես ասվեց, փոխատեղությունը կարող է բերել խոսքամասային փոփոխություն: Այստեղ առաջին հերթին պետք է նշել գոյականի փոխարկումն ածականի և, բնականաբար, հակառակը: Բաղկացած լինելով միևնույն բաղադրիչներից՝ հետևառաջության պատճառով, բառազույգի անդամներից մեկը լինում է գոյական, մյուսը՝ ածական, ինչպես. կերաբանջար-բանջարակեր, գեղանկարիչ-նկարչագեղ, գրամեքենա-մեքենագիր, սիրերգ-երգասեր: Այսպիսի դեպքերում ածականակերտ ածանցների անհրաժեշտություն չկա: Ածականի իմաստը հիմնականում արտահայտվում

է բաղադրիչների ներքին շարահյուսական հարաբերությամբ, որով մատնանշվում է բայանուն ածական լինելը՝ խառնաբարբառ-բարբառախառն, ձուլոսկի-ոսկեձույլ, շինափայտ-փայտաշեն, բնակատեղ-տեղաբնակ, կամ համեմատության եզրեր ունենալը. կարմրահող-հողակարմիր, չափերիզ-երիզաչափ, չափակետ-կետաչափ:

Գոյականի փոխարկումը մակբայի համեմատաբար սակավ է հանդիպում և հակառակը՝ նույնպես: Այստեղ էլ մակբայակերտ ածանցների անհրաժեշտությունը չի զգացվում. բաղադրիչները, ներքին շարահյուսական հարաբերությամբ, մակբայի իմաստ են արտահայտում, ինչպես. քայլարշավ-արշավաքայլ, խառնակոթիվ-կոթվախառն, իւեղդահագ-հագախեղդ, ձայնախումբ-խմբաձայն: Գոյականի, նաև ածականի ու մակբայի փոխարկումը թվականի կամ բայի բացառվում է:

ԱՕԱԿԱՆ: Փոխատեղության ածականները, որոնք նույնպես լինում են որակական ու հարաբերական, քանակով երկրորդ տեղում են՝ ավելի քան 1100 բառ: Ածականակերտ ածանցներից առավել հաճախական են *ական* և *ային* վերջածանցները. առաջինով հաշվել ենք շուրջ 140, երկրորդով շուրջ՝ 60 նույնաբաղադրիչ փոխատեղությո: Մյուս ածանցները՝ *ան*, *ավուն*, *աց*, *իկ*, *ին*, *յա*, *ո*, *ու*, միասին վերցրած, ավելի քիչ բառեր են կազմում, քան առաջին երկուսը: *Ական*, *ային* ածանցներն անշարժ են և մնում են որպես բառի վերջին բաղադրիչներ. անվանաբայական-բայանվանական, լսատեսողական-տեսալսողական, գրապատմական-պատմագրական, ավագակավային-կավավագային, ատամնաշրթնային-շրթնատամնային, լեռնահովտային-հովտալեռնային:

Բառակազմական վերլուծությունը ցույց է տալիս, որ փոխատեղական ածականների մեծագույն մասը բաղկացած է առանց ածանցի՝ երկու արմատից: Ամենից շատ բառ կազմող արմատներն են՝ *առատ* և *գեղ*, համապատասխանաբար՝ մոտ 70 և ավելի քան 90: Յուրաքանչյուրից բերենք մի քանի օրինակ. *առատաձյուն-ձյունառատ*, *առատաջուր-ջրառատ*, *առատացող-ցողառատ*, *ապա՝ գեղադալար-դալարագեղ*, *գեղամարմին-մարմնագեղ*, *գեղաշնորհ-շնորհագեղ*: Նկատելի է, որ փոխատեղական ածականների բառազույգերը մեծամասնությամբ ունեն նույնիմաստ անդամներ: Այդպիսիք էին վերը բերված *առատ* և *գեղ* արմատներով կազմվածները, շատ այլևայլ ածականներ և, բնականաբար, զուգադրական հարադրություններն ու բաղիյուսականները: Բերենք օրինակներ բառաբարդության վերջին երկու տեսակից. *կանաչ-կարմիր* և *կարմիր-կանաչ*, *հասարակական-քաղաքական* և *քաղաքական-հասարակական*, *փոքր-մեծ* և *մեծ-փոքր*, *ապա՝ մահու* և *կենաց-կենաց* և *մահու*, *մութուլույս-լույսումութ*, *չորութաց-թացուչոր*:

Մերձիմաստ ածականներն առաջին հերթին աղերսվում են գույների նրբերանգների հետ: Երկու արմատները ներկայացնում են գույների խառնուրդ, որոնցից հիմնականը բառում երկրորդ դիրքում է, իսկ երանգավորողը՝ առաջին: Մյուս անդամում հակառակն է: Օրինակներ. *գորշակապույտ-կապտագորշ*, *դարչնակարմրագույն-կարմրադարչնագույն*, *դեղ-*

նակարմիր-կարմրադեղին: Լրացուցիչ իմաստ է հաղորդում ածականակերտ *ավուն* ածանցը, որը ևս անշարժ է, լինում է բառավերջում. գույներից մեկին տալիս է այլ երանգ՝ դարձնելով թերի: Գործնականում կարող է ավելանալ գունիմաստ ունեցող բոլոր ածականային բառերի վրա, եթե վերջիններս չեն ավարտվում *գույն* բաղադրիչով, ուստի բավականին բառեր է կազմում թե՛ միարմատների, թե՛ երկարմատների հետ: Մեզ հետաքրքրում են վերջինները, որոնցով ունենք. դեղնականաչավուն-կանաչադեղնավուն, դեղնակապտավուն-կապտադեղնավուն, կանաչակապտավուն-կապտականաչավուն: Համերի դեպքում ճիշտ նույն կերպ վերջինը հիմնական համն է, լրացուցիչը՝ առաջինը. քաղցրաթթու-թթվաքաղցր, դառնաքաղցր-քաղցրադառն:

Չնայած ածականների մեծաքանակ լինելուն՝ բառագույգեր կազմող հեռիմաստները սակավ են՝ հազիվ քառասունը: Դրանցից են. բանասիրական-սիրաբանական, թթվակաթնային-կաթնաթթվային, կերաշատ-շատակեր: Առանձնակի նշենք արյունալի-լիարյուն ածականները. նույն արմատներից բաղկացած լինելով՝ դրափոխությունից հետո արտահայտում են ոչ միայն հեռավոր, այլև հակադրական իմաստներ. հմմտ. արյունալի մարտեր, արյունալի իրադարձություններ և՛ լիարյուն կյանք, լիարյուն գործունեություն: Փոխատեղության հետևանքով խոսքամասային փոխարկումների առնչությամբ՝ կապված ածականների հետ, կարող ենք ասել հետևյալը: Բառագույգերի մեծ մասում ունենք միայն ածականներ: Այդպիսիք էին մինչև հիմա բերված օրինակները: Որոշ համաբարդ ածականներ էլ գույգեր են կազմում վերլուծական բարդությունների հետ, որոնց առաջին բաղադրիչներն ընդունում են *ը* հոդը. պնդերես-երեսը պինդ, հաստակող-կողը հաստ, լայնսիրտ-սիրտը լայն և ուրիշներ: Ինչպես տեսանք, որոշ գոյականային անդամներից բաղադրիչային փոխատեղությունից հետո առաջանում են ածականներ: Բնականաբար, լինում է և հակառակը: Ըստ որում, մի քանի դեպքերում ածականային անդամը փոխարկվում է հատուկ գոյականի, օրինակ. դեղասեր-Սիրադեղ, ջրաշատ-Շատջուր (Ջաջուռ գյուղի նախկին անունը), լուսաշատ-Շատլույս (արական անձնանուն), ավանամերձ-Մերձավան (գյուղ՝ Երևան-Էջմիածին ավտոմայրուղու աջ կողմում), բերդաշատ-Շատբերդ (գյուղ և բերդ՝ Գուգարք աշխարհում): Հասարակ գոյականների հետ գույգ կազմողներից են՝ բուսակեր-կերաբույս, անվանփոխփոխանուն, խաղասեր-սիրախաղ, քարադաց-ադացաքար:

Ածականային անդամների մի մասն էլ փոխարկվում է մակբայների: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ շատ բառեր թե՛ ածական են, թե՛ մակբայ: Այդպիսիներից կազմված բառագույգերի երկու անդամներում էլ, ուրեմն, առկա են այս երկու խոսքի մասերը, օրինակ. արձակահեր-հերարձակ, գլխակորկորագլուխ, լիասիրտ-սրտալի, կամահոժար-հոժարակամ, խռովահույզ-հուզախռով և այլն:

ԹՎԱԿԱՆ: Խիստ սահմանափակ է այն բառագույգերի քանակը, որոնց երկու անդամներն էլ համաբարդ թվականներ են. յոթանասունուրթ-ութսունյոթ, յոթանասունինը-իննսունյոթ, ութսունինը-իննսունուրթ: Քանի որ նշվածներից կազմվում են *դասական թվականներ*, և գործնականում խոսքում կիրառվում, ավելացնենք ևս մի քանի բառագույգ. յոթանասուն

ութերորդ (էջ)-ութսունյոթերորդ (պարագրաֆ), յոթանասունիններորդ (կիլումետր)-իննսունյոթերորդ (մետր), ութսունիններորդ (դիվիզիա)-իննսունութերորդ (գունդ): Մրանցից տեսականորեն հնարավոր է կազմել բաշխական թվականներ, բայց քանի որ խոսքում դրանց փոխաստեղծությունները չեն հանդիպում, ուստի չենք էլ հիշատակում: Մյուս տասնավոր քանակական թվականներից նույնաբաղադրիչ փոխաստեղծություններ չեն առաջանում, քանզի բաղադրիչները հետևառաջությունից հետո որոշակի փոփոխություններ են կրում: Բերված թվականները այն սակավաթիվ եռարմատ բառերից են, որոնցում փոխաստեղծություն է կատարվում: Ներկա դեպքում *ուն* արմատը մնում է իր տեղում՝ միջին դիրքում, դրափոխվում են թվերը:

Սակավաթիվ են նաև այն բառազույգերը, որոնցում մի անդամը համաբար թվական է, իսկ մյուսը՝ վերլուծական (բաղադրյալ), թեև նախորդի պես տասնավոր է: Կարող ենք բերել հետևյալները՝ տասներկու-երկու տասը (քսան). «Այդ օրվանից երկու տասը տարի է անցել» (ԱՍ, 541): Քսաներկու-երկու քսան (քառասուն). «Երկու քսան տարիս անցել, Պիոներ եմ դեռ մնացել» (ՍՀ, 365): Քսաներեք-երեք քսան (վաթսուն), Քսանչորս-չորս քսան (ութսուն). «... Էս մութ ձորերում էս է չորս քսան տարիս լրացավ» (ԹՀ, I, 67): Այլ է վերլուծական բարդության թվականների պարագան, որոնք սկսվում են հարյուր մեկից և շարունակվում անսահմանափակորեն: Բաղկացած են նվազագույնը երկու անջատ բառից: Վերջիններիս քանակը թվակարգերին համապատասխան աճում է: Առօրյայում գործածվող մեծ թվերում, ինչպիսիք արտահայտվում են, ասենք, հարյուրավոր տրիլիոններով՝ իրենց կարգերի հետ միասին, արդեն բազմաբարդ են, միայն անջատ բաղադրիչները հասնում են տասնիննի: Ավելի մեծ թվերում, բնականաբար, լինում է ավելին: Բոլորն էլ կայուն բառակապակցություններ են և արտահայտում են մի-մի լեզվական գաղափար՝ առանձին-առանձին թվեր: Յուրաքանչյուր այսպիսի թվականի բաղադրիչները փոխաստեղծելի են, որից առաջանում են տարբեր զուգորդություններ, այսինքն՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող այլևայլ թվեր կամ որ նույնն է՝ թվականներ: Եթե բաղադրիչները երկուսն են, կունենանք երկու զուգորդություն՝ երկու փոխաստեղծությամբ անդամ. հարյուր երկու-երկու հարյուր, հարյուր երեք-երեք հարյուր, հազար չորս-չորս հազար, հազար հինգ-հինգ հազար և այլն: Բայց երբ բաղադրիչները շատ են, շատ են նաև փոխաստեղծությամբ զուգորդությունները: Մեկ օրինակ միայն՝ հազար հարյուր երկու եռաբաղադրիչ անդամն ունի այսպիսի նույնաբաղադրիչ փոխաստեղծություններ. հազար երկու հարյուր, երկու հազար հարյուր, հարյուր հազար երկու, հարյուր երկու հազար, երկու հարյուր հազար՝ վեցանդամ մի բառախումբ: Իսկ երբ ավելի մեծ է թիվը, և կարգերն էլ հետն են, շատ են նաև բաղադրիչները: Մնում է միայն մտովի ամփոփել, ասենք՝ տասնինը բաղադրիչից բաղկացած թվականից քանի՞ քանի՞ օբյեկտիվ զուգորդություն կարող է լինել: Եվ այսպես է հարյուրից բարձր բոլոր թվականներում (կան մի քանի կարգի բացառություններ, ինչպես, օրինակ՝ 110, 120, 130..., 55555, 22222222 և այլն): Ուրեմըն՝ տեսականորեն փոխաստեղծությամբ թվականները քանակով առաջին տեղում են, անսահմանափակ են, բայց գործնականում՝ խոսքի մեջ, նման

բազմանդամ զուգորդությունների հաճախականությունը շատ սահմանափակ է: Դրանք բառարանային միավորներ չեն: Բառարանագիրներն արձանագրում են միայն հարյուրավորները և հազարավորները՝ առաջին տասնյակի միավորներով, ինչպես. հարյուր վեց-վեց հարյուր, հարյուր յոթ-յոթ հարյուր, հազար ութ-ութ հազար, հազար ինը-ինը հազար:

Թվականներում բաղադրիչների դրավոխությանը առաջ են գալիս միայն այլ թվականներ: Ուրիշ խոսքի մասի փոխարկում տեղի չի ունենում: Կոտորակներում փոխատեղվում են համարիչն ու հայտարարը կամ ամբողջ ցույց տվող թիվն ու համարիչը:

Այլ խոսքի մասերի հետ ունեցած առնչություններից ուշադրության է արժանի փոխատեղությամբ թվական բաղադրիչների մասնակցությունը գոյականների և ածականների կազմությանը: Այստեղ առավել սովորական են *ամ* (տարի) արմատով բարդությունները՝ ածականակերտ *յա* և գոյականակերտ *յակ* վերջածանցներով: Այդպիսիք են. յոթանասունութամյա-ութսունյոթամյա (ծերունի), յոթանասունութամյակ-ութսունյոթամյակ (ծննդյան), նույն կերպ. յոթանասունինամյա-իննսունյոթամյա և՝ յոթանասունինամյակ-իննսունյոթամյակ: Մրանք բնույթով հազվագյուտ բառագույզեր են, որովհետև անդամները թեև համաբարդ, բայց քառարմատ են: Հետևառաջվում են միայն թվերը, *սուն*, *ամ* արմատները և վերջածանցները մնում են անշարժ: Այդ պատճառով դարձյալ առաջանում է երկու զուգորդություն՝ երկու անդամ:

ԲԱՅ: Հաշվել ենք փոխատեղելի արմատներով երկու հարյուրից քիչ պակաս բայ: Մեծ մասը՝ համաբարդություններ են, փոքր մասը՝ զուգադրական հարադրություններ՝ թվով մոտ երեսուն: Առաջիններից են. բանավիճել-վիճաբանել, դատաքննել-քննադատել, կերպափոխել-փոխակերպել: Երկրորդներից են. բացել-փակել և փակել-բացել, բերել-տանել և տանել-բերել, երգել-պարել և պարել-երգել: Կան նաև մի քանի հարադիրներ. ներս ու դուրս անել-դուրս ու ներս անել, վեր ու վար անել-վար ու վեր անել: Բայերի մեծագույն մասը պատկանում է *ե* խոնարհման: Ա խոնարհման պատկանողները քիչ են, այն էլ զուգադրականների կազմում են՝ *ե* խոնարհման պատկանող գույզի հետ. առնել-տալ և տալ-առնել, իջնել-բարձրանալ և բարձրանալ-իջնել, գրել-կարդալ և կարդալ-գրել: Երկու բառագույզ կա՝ գալ-գնալ և գնալ-գալ, երթալ-գալ և գալ-երթալ, որտեղ երկու անդամներն էլ *ա* խոնարհման բայեր են: Այս սակավությունը բացատրվում է նրանով, որ, ընդհանրապես, հայերենի «ա» խոնարհման բայերի մեծամասնությունը միարմատ է՝ ածանցավոր, մասնիկավոր կամ կրկնավոր բնաձայնություններ են<sup>2</sup>: Միայն մեկ տոկոսն է երկարմատ, բայց դրանցում էլ բաղադրիչները փոխատեղելի չեն: Դրանցից են. անդրադառնալ, բարեկամանալ, դյուցազնանալ, կանխազգալ, մասնագիտանալ, մեծամտանալ, միամտանալ, չարախնդալ, անանկանալ:

<sup>2</sup> Տե՛ս **Բարսեղյան Հ. Խ.**, Մրդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1954, հավելվածը. այստեղ բերվում է *ա* խոնարհման 1500 բայ, որոնցից միայն 16-ն է երկարմատ:



Բայերում արմատների տեղափոխումից ուրիշ խոսքի մասեր չեն առաջանում: Պատճառը առանձնահատուկ *ալ, էլ* ածանցներն են, որ պետք է ունենան միայն բայերը՝ բառավերջում: Այլ խոսքի մասերից, մասնավորապես գոյականներից եղած բայեր, տեսականորեն կարող էին առաջանալ, եթե բառաբարդության մեջ անորոշ դերբայը լիներ շարժական: Մենք հաշվել ենք քառասունից ավելի բառ, որոնցում անորոշ դերբայը առաջին դիրքում է: Դրանցից են. ապրելակարգ, ապրելավայր, գրելաձև, գրելառճ, նստելատեղ, նստելավարձ, վարվելակերպ, վարվելաձև, վարելահող, վարելատեղ, վառելանյութ, վառելափայտ, կարելավարձ, խմելաջուր, խոսելաձև, պառկելախոց, պառկելատեղ և այլն: Մակայն չենք գտել գեթ մեկը, որում հնարավոր լիներ անորոշ դերբայը շարժել դեպի բառավերջ, իսկ երկրորդ դիրքի արմատը բերել առաջին դիրք և բայ ստանալ: Նույնաբաղադրիչ փոխաստեղծությամբ բայերն ուրիշ յուրահատկություններ չեն դրսևորում:

ՄԱԿԲԱՅ: Բառային տարբերակներով հանդերձ, հաշվել ենք 150-ից ավելի նույնաբաղադրիչ փոխաստեղծությամբ մակբայներ՝ բոլոր չորս տեսակներով.

ա. ժամանակի մակբայ: Գտել ենք զանազան կազմության վեց բառագույգ: Առաջին երկու բառագույգերը՝ *ամառ-ձմեռ* և *ձմեռ-ամառ*, գիշեր-ցերեկ և ցերեկ-գիշեր, զուգադրական հարադրություններ են: Օրինակ. «Գիշեր-ցերեկ օխտը սարով հեռո՛ւ քեզնից գրկված քնից ծով է կտրում այքս ճամփիդ» (ԻԱ, 13), «Մազ կըչալե, կըչալե... ցերեկ-գիշեր» (ՄԳ, 480-481): Երրորդ բառագույգը՝ օրը ցերեկով – ցերեկ օրով, հարադրություն է: «Միշտ գալիս էին անթիվ նավերով, Այն էլ աշկարա՛ օրը ցերեկով» (ԱՂ, 353), [Ի՛նչ կա վախենալու, այն էլ այսպես ցերեկ օրով]: Չորրորդ ու հինգերորդ բառագույգերում՝ այնուհետ – հետ այնու (հետ-այնու), այսուհետ – հետ այսու (հետայսու), առաջին անդամները համաբարդություններ են, երկրորդ անդամները լինում են թե՛ վերլուծական (բաղադրյալ), թե՛ համաբարդ: Օրինակ. «Ավա դ, այսուհետ քեզ չեմ տեսնելու Մայրիկ իմ քնքուշ» (ԻԱԲ, 293), «Մեր պատմությունը հետ այսու աղետալի սխալների կրկնությունը պետք է չլինի» (ՆԳ, 164): Վերջին բառագույգը՝ գիշերուգոր-գորուգիշեր, բաղիյուսական է, լինում է թե՛ կըցական, թե՛ վերլուծական: «Եվ թույն - փոշին այն խարտոցի, Որ բանում է գիշեր ու գոր» (ՄՊ, Բ, 58), [գորուգիշեր կարկաչող աղբյուրներ]:

բ. Ձևի մակբայ: Ամենից բազմաքանակն է՝ 130-ից ավելի բառ՝ նույնպես տարբեր կազմության: Օրինակներ. մոլորաքայլ-քայլամոլոր, ազատական-կամազատ, առաջ-հետ և հետ-առաջ, լավ-վատ և վատ-լավ, կեսլուրջ-կեսկատակ և կեսկատակ-կեսլուրջ: Նկատելի է *որեն* վերջածանցը՝ միակ մակբայակերտը նույնաբաղադրիչ փոխաստեղծությունում. առատաձեռնորեն-ձեռնառատորեն, արժանապատվորեն-պատվարժանորեն, բանիմացորեն-իմացաբանորեն և այլն: Կան քերականական քարացած վերջավորություններով անդամներ ունեցող բառագույգեր՝ վերից-վար և վարից-վեր, բարով-խերով և խերով-բարով:

գ. Տեղի մակբայ: Քանակով շատ քիչ են. գտել ենք չորս բառագույգ՝ աջ ու ձախ (աջուձախ) [աջ ու ձախ փոված այգիներ...աջուձախ տարածվող արտեր] - ձախ ու աջ (ձախուաջ). «Փող չեմ կտրում, որ ձախ ու

աջ շաղ տամ, Չամչի նման ցրեմ» (ՄՊ, Գ, 38), [Փողոցում ձախուսաջ կանգնած ոստիկանները...]: Բոլորաշուրջ [Բոլորաշուրջ անձանոթ մարդիկ էին] - շուրջբոլոր. «Փախլավա հանեց և պարզեց շուրջբոլորը գտնվող հյուրերին» (ՀԷ, 60): Դես ու դեն (դեսուդեն). «Հերիք է, Անուշ ներս արի դագեն, Քանի դուրս թոչես, նայես դես ու դեն» (ԹՇ, I, 77) - դեն ու դես (դենուդես). «Գնա ընկիր դեն ու դեսը Եվ այնպիսի ճիպոտ բեր ինձ...» (ՄՊ, Գ, 12): Դեմ դիմաց. «Բերեց, դեմ դիմաց կանգնեցրեց» (ՄՍ, I, 520) - դիմացդեմ [Գետի ափին՝ դիմացդեմ, երկու հսկա ժայռ կար]:

դ. Չափ ու քանակի մակբայ: Ընդամենը՝ մի քանիսն են. գտել ենք հինգ բառագույգ: Առաջին չորսը բաղկացած են միևնույն *շատ* և *քիչ* բաղադրիչներից: Այն է՝ շատ թե քիչ. «Գնացինք, գնացինք շատ թե քիչ, մին էլ տեսնենք՝ երեք լիճ» (ԹՇ, III, 199)-քիչ թե շատ. «Քիչ թե շատ կար հաց, ունեինք ջուր» (ՄՊ, Գ, 258): Շատից-քիչ. «Շատից-քիչ մենք էլ օգնում ենք» (ՄՍ, III, 502)-քիչ-շատից «Քիչ-շատից մենք էլ բան հասկանում ենք» (ԺՀԼԲԲ, 749): Շատ-քիչ [Բոլորս էլ շատ-քիչ աշխատել ենք այդ ասպարեզում] - քիչ-շատ. «Ամենքն ալ քիչ-շատ դրամ կձարեին...» (ՄՇ, 167): Քչե- շատե [Քչե-շատե իրենց հացը վաստակում են]-շատե-քչե [Շատե-քչե մենք էլ ծանոթ ենք այդ ամենին]: Չորրորդ բառագույգի անդամներում *զուլիս* ու *ոտ* բաղադրիչներն են. գլխով-ոտով և ոտով-գլխով. «Յազո - Կա՛մ այս գիշերը բախտս կշինի, կա՛մ գլխով-ոտով ինձ կկործանի» (ՇՎ, 202), «Ես կորած եմ, ոտով-գլխով կորած» (ԴԱ, 73):

Այժմ մակբայական անդամներ ունեցող բառագույգերում խոսքամասային փոխարկումների մասին: Վերը բերված օրինակներում երկու անդամներն էլ մակբայներ էին: Գոյականների և ածականների մասին խոսելիս նշվեց, որ բաղադրիչների փոխատեղությունից հետո դրանք կարող են վերածվել նաև մակբայների: Բնականաբար, լինում է և հակառակը՝ մակբայները՝ գոյականների. բարբառախառն-խառնաբարաբառ, արմատախառն-խառնարմատ, լացախեղդ-խեղդալաց: Ավելի հաճախ է հանդիպում մակբայի փոխարկումը ածականի: Նկատենք, որ հայերենում շատ դեպքերում բառը թե՛ ածական է, թե՛ մակբայ: Այդպիսիք շատ են նույնաբաղադրիչ փոխատեղությունում՝ բառագույգերի երկու անդամներում, ինչպես՝ դեմ և թեր (դեմլթեր)-թեր և դեմ (թերևդեմ), ձեռնունայան-ունայանաձեռն, անտուն-անտեր և անտեր-անտուն, կուշտուկուռ-կուռուկուշտ, մտամոլոր-մոլորամիտ, զվարթաձայն-ձայնազվարթ:

Արդեն նշեցինք, որ կան նաև մի քանի շաղկապական և վերաբերական նույնաբաղադրիչ փոխատեղություններ: Դրանցում հատկանշականն այն է, որ բոլորում առկա է *թե* բաղադրիչը. թե ոչ-ոչ թե, թե չե-չե թե, թե ինչ է-ինչ է թե, իբր թե-թե իբր: Վերջին բառագույգում միանշանակ գործ ունենք վերաբերական փոխատեղականների հետ [Միշտ պատճառաբանում է, թե իբր տրանսպորտ չկա, դրա համար է ուշանում: Ձևացնում է, իբր թե անտարբեր է]: Մյուսներում բառանդամները միաժամանակ արտահայտում են թե՛ վերաբերական, թե՛ շաղկապական իմաստներ, այնպես, ինչպես որ երկակի բնույթի են գոյական-ածականները կամ ածական-մակբայները:

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՂ - Աղայան Ղազարոս, Եժ, հ. 1, Ե., 1973:  
ԱՍ - Այվազյան Սուրեն, Ճակատագիրն հայոց, Ե., 1969:  
ԴԱ - Դյումա Ալեքսանդր, Կոմս Մոնտե Քրիստո, հ. 1, Ե., 1966:  
ԹՀ - Թումանյան Հովհաննես, Եժ, հ. 1, Ե., 1961, հ. 3, Ե., 1961:  
ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Ե., 1980:  
ԻԱ - Իսահակյան Ավետիք, Եժ, հ. 1, Ե., 1973:  
ԻԱԲ - Իսահակյան Ավետիք, Բանաստեղծություններ, Ե., 1958:  
ՀԵ - Հիլզենրաթ Էդգար, Վերջին մտքի հեքիաթը, Ե., 1994:  
ՄՄ - Մալխասյանց Ստեփանոս, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Ե., 1944, հ. 3, Ե., 1944:  
ՄԳ - Մահարի Գուրգեն, Լռության ձայնը, Ե., 1962:  
ՄՀ - Մնձուրի Հակոբ, Երկեր, Ե., 1986:  
ՆԳ - Նժդեհ Գարեգին, Երկեր, հ. 1, Ե., 2001:  
ՇՎ - Շեքսպիր Վիլյամ, Օթելլո, Ե., 1984:  
ՍՀ - Սահյան Համո, Եժ, հ. 1, Ե., 1984:  
ՍՊ - Սևակ Պարույր, Եժ, հ. Բ, Ե., 1973, հ. Գ, հ. Դ, Ե., 1973:

**АНАЛИЗ ИДЕНТИЧНЫХ ПЕРЕСТАНОВОЧНЫХ КОМПОНЕНТОВ**

(по частям речи)

ГЕВОРКЯН С. П.

**Резюме**

В армянском языке доминируют существительные (около 2000), причем 300 из них являются именами собственными (топонимы, фамилии, имена). В результате перестановки идентичных корней и суффиксов существительные могут превратиться в прилагательные и наречия, а последние, в свою очередь, – в существительные. На втором месте стоят прилагательные (более 1100), образованные в основном из двух корней без суффиксов. Насчитывается также более 15 числительных, выраженных сложными словами. Перестановка компонентов характерна для аналитических числительных, выраженных устойчивыми словосочетаниями (начиная с числительного 102).

Следует отметить, что в армянском языке есть около 300 глаголов с перестановочными идентичными лексическими компонентами. В силу специфичности флексий глаголы в другие части речи не превращаются. Насчитывается 150 наречий с ИПК, компоненты которых могут меняться местами в зависимости от стилистики текста. Для армянского языка характерно также наличие ограниченного числа союзов и модальных слов.